ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1
18 դեկտեմբերի 2012 թ. կնքված N ԲՇԱՀԾՁԲ-12/53 պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան 30 ապրիլի 2014 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ), ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ նաև Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասը և Կողմերի միջև 18 դեկտեմբերի 2012 թ. կնքված՝ ՀՀ Արմավիրի մարզի գ. Հայկաշենի դպրոցի վերակառուցման, ք. Երևանի թիվ 191, թիվ 142, թիվ 93 դպրոցների վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման N ԲՇԱՀԾՁԲ-12/53 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր), 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 կողմերը որոշեցին.

1.1.1 նվազեցնել Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները՝ ՀՀ Արմավիրի մարզի գ. Հայկաշենի դպրոցի, ք. Երևանի թիվ 142 և թիվ 93 դպրոցների վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մասով:

1.1.2 նվազեցնել Պայմանագրի գինը 2,160,000 (Երկու միլիոն հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ Պայմանագրի 4.1 կետի <<2940000 (Երկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար)>> արտահայտության փոխարեն կարդալով <<780,000 (Յոթ հարյուր ութսուն հազար)>> արտահայտությունը:

1.2 Կատարողը պարտավորվում է ՀՀ Արմավիրի մարզի գ. Հայկաշենի դպրոցի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների մատուցման համար Պատվիրատուի կողմից փոխանցված կանխավճարի գումարը՝ 660,000 (Վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը, վերադարձնել սույն Համաձայնագրի երկկողմանի կնքման պահից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի 1.2 կետով սահմանված կանխավճարի գումարը վերադարձնելու օրվանից:

2.2 Սույն համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ

ք.Երևան, Հանրապետության հրապարակ,

կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի

գործառնական վարչություն

Հ/Հ 900011086338,

Հ/Հ 900011087757,

Հ/Հ 900011087740,

Հ/Հ 900011086148

ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան ........................ (ստորագրություն)

Կապալառու

<<ՀՀ նախագծերի պետական

արտագերատեսչական

փորձաքննություն>> ՓԲԸ

ք. Երևան, Տիգրան Մեծի պող.

4-րդ շ., 3-րդ հարկ

<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ

Նաիրի մ/ճ

Հ/Հ 2473700277210010

ՀՎՀՀ 01508665

Տնօրեն Գ. Արշակյան ........................ (ստորագրություն)